ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Արմավիրի մարզի Արաքս/էջմ/ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1), գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-1), համայնքային ծառայության թափուր պաշտոնների զբաղեցնելու համար
Հայտատու՝ Արաքսի համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս/էջմ/ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս/էջմ/ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ/ԷՋՄ/ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ (ծածկագիր 1.2-1)

Քարտուղարը՝
Աշխատակազմում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.
ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատարաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.
կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.
կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.
իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Աշխատակազմի քարտուղարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:
Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝
բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝պետական ծառայության դասային աստիճան կոչում կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեություն առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:
ՀՀ <<Սահմանադրության >>, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգիրքի>>, ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>>, ՀՀ <<Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2021 թվականի օգոստոսի 17-ին, ժամը 1200-ին Արաքս/էջմ/ համայնքապետարանի շենքում:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է օգոստոսի 02 –ը ժամը 1800-ն:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ/ԷՋՄ/ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ծածկագիր 2.3-1)

Գլխավոր մասնագետը՝
 աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը,
 աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական տուրքերի և վճարումների դրույքաչափերը սահմանելուն վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստման աշխատանքներին,
 աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի կազմման, ամփոփման և ներկայացման աշխատանքները,
 աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը,
 իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին,
 ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը,
 պատասխանատվություն է կրում գյուղապետարանի հաշվեկշռում գույքագրված գույքի համար:
 իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
 Գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝
 բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
 ՀՀ<<Սահմանադրությ³ն>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հողի հարկի մասին>>, << Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Եկամտահարկի հարկի մասին>>, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
 Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
 Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Մրցույթը կկայանա 2021 թվականի օգոստոսի 17-ին, ժամը 14:00-ին Արաքս/էջմ/ համայնքապետարանի շենքում:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է օգոստոսի 02 –ը ժամը 18:00-ն:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողվ անձինք:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
ա) գրավոր դիմում հանձնաժողովի անունով՝ նշելով պաշտոնը, որին հավակնում է դիմողը.

բ)համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ ատեստատ(ներ), դիպլոմ(ներ), վկայական(ներ), աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից).
գ) հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե >>ենթակետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.
զ) մեկ լուսանար(3x4 չափսի).
է) անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արաքս/էջմ/ համայնքապետարանի աշխատակազմ (հասցե ՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս/էջմ/ համայնք, Դրոյի փողոց, թիվ 2 շենք, հեռ.՝ (093)83-89-69, կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ-ի և ՀԳՄՀ վարչություն (հասցեն՝ ք,Արմավիր 71, հեռ՝(0237) 2-76-49, 2-07-70).ամեն օր ժամը 9:00-ից մինչև 18:00՝ բացի շաբաթ ,կիրակի և տոն օրերից:
Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում: